

Ղեւնդ և նոյն ինքն Եօրին զառնային 'ի Պոլսոյ Հանդերձ Հաստատուն օրինակօք աստուածատուր գրոցն, այսինքն ընտիր օրինակօք աստուածայունչ գրոց՝ զոր ետուն նոցա յարգունական գրատանէ, յայնժամ Հանդերձ Եզնակաւ զյառաջողոյն Թարգմանեալն՝ որ եղև Թարգմանութիւն փութանակի, հաստատեի ճշմարիտ օրինակօքն բերելովք, այսինքն բազում ուրեք ուղղագրէր ըստ աստուգարան ընտիր օրինակին զոր բերին 'ի Պոլսոյ »:

Այս՝ ըստ կարծեաց Հնախօս և բազմահաշակ հեղինակին:

Սակայն մեզի կ'երևնայ որ այս վերջի աշխատութիւնն չըրած՝ սրբոյն Սահակայ աստուածաշունչ գրոց մասնական Թարգմանութենէ մը զատ է՝ ասորի Թարգմանութեան վրայէն ըրած մեծ և ծանր վատարկը:

Շարունակելի

Հ. Գ. Զ.

ՆԵՄԵՍԻՈՍԻ

ՅԱՂԱԳՍ ԲՆՈՒԹԵԱՆ ՄԱՐԴՈՅ

(Տես էջ 31)

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Յաղագս միաշորոշեալս հոգւոյ¹ և մարմնոյ:

Խնդրելի է թէ զիարդ լինի միաւորութիւն անձին և մարմնոյ, քանզի տարակուսելի է իրդ: Իսկ թէ ոչ միայն յայսցանէ², այլ և 'ի մտաց հաստատեցաւ մարդ, որպէս ասացին ոմանք, ևս առաւել է տարակուսելի: Քանզի ամենայն որ ժողովի 'ի միոյ էութեան գոյացութիւն՝ ամենայն իրօք միաւորի. և միաւորեալքն այլայլին, և ոչ մընան որ ինչ յառաջագոյնն էին, (որպէս և 'ի վերայ տարերցս ցուցցի³), քանզի միաւորեալք՝ այլ ինչ եղեն: Արդ, զիարդ կայ՝ մարմին միաւորեալ ընդ անձին՝ տակաւին մնայ մարմին. և կամ դարձեալ, անձն՝ անմարմին գոյով և էապէս ըստ ինքեան, զիարդ միաւորի ընդ մարմնոյ և մասն լինի կենդանւոյն, ամբողջ պահելով զիրն էութիւն անշփոխ և անփակաւան, Քանզի հարկ է կամ միաւորիլ անձինն և մարմնոյ, և 'ի միասին այլայլիլ և ապականիլ երկոցունց, որպէս տարերջս, և կամ՝ ոչ միաւորիլ ըստ նախաճառեցելոյս անտեղութեանցս, այլ առննթեր կալ, որպէս զպարաւորս 'ի պարու կամ

1) Ի խորագրին ևեթ հոգւոյ եգեալ կայ յամենայն ձեռագիր օրինակս մեր:

2) Իմա, իսկ եթէ ոչ միայն յանձնէ և 'ի մարմնոյ ասիցի գոյ մարդոյ, այլ և 'ի մըտաց՝ իզբիւ յերրորդ իմն բաղկացուցէ, ըստ ասելոյ ոմանց, յայնժամ՝ առաւել ևս առնն դժուարութիւնքն 'ի բացայայտել:

3) Տես 'ի Գլուխն շինգերորդ:

զթիւ առ թիւ, կամ խառնակիլ որպէս գինի և ջուր։ Այլ վասն զի ոչ կարէ առնելներ կալ անձն մարմնոյ՝ ցուցաւ՝ յորում Յաղագս անձին։ քանզի լինէր արդեօք միայն այն կողմն մարմնոյն անձնաւոր՝ հպեալ մասն յանձն։ Իսկ որ ոչն էր ընդ նմա՝ անանձն էր։ առ ոչ կարել մի գոլ զըստ առնելներ գրութեանցն¹, որպէս զերկաթի փայտ պատկանեալ կամ զայսպիսիս։ և ի խառնումն գինեոյ և ջրոյ՝ երկոքինն ապականին, քանզի ոչ ջուր մաքուր է խառնեալն, և ոչ գինի։ որ և այսպիսեայն խառնման ըստ յարադրութեան եղելոյ՝ զանխլացեալ զգայութեանն՝ վասն նրբամասնութեան խառնեցելոցն, յայտ է դարձեալ ի միմեանց կար գոյոյն զատիլ։ սպունգ ի ձէթ թացեալ՝ յինքն ժողովէ զմաքուր զջուրն և պրտու։ բայց ըստ զգայութեանց՝ որոշել զստուգապէս միաւորեալսն՝ ամենայնի անկար է։ Իսկ եթէ ոչ միաւորի, և ոչ առնելներ կայ, և ոչ խառնի, զինչ բանս մի ասեւրոյ զկենդանին²։

Արդ, Պղատոն վասն այսր տարակուսանաց՝ ոչ խորոժէ յանձնէ և ի մարմնոյն գոլ զկենդանին, այլ զանձն մարմնով վարեալ և որպէս զգեցեալ զմարմինն։ Բայց ունի և բանս՝ տարակուսանս ինչ։ քանզի զիրարդ կարէ մի գոլ անձն ընդ զգեստին։ զի ոչ է մի՝ պատմութեան ընդ զգեցողին։ Իսկ Ամինիոս վարդապետն Պղոտինոսի³ զխնդրելիս՝ այսու յեղանակաւ լուծանէ։ ասէ զիմացողականն այսպիսիս ունել բնութիւն, որպէս զի և միաւորիլ՝ ընդ կարողն ընդունել զնա, որպէս ի միասին զապականեալսն⁴, և միաւորեալս՝ մնալ անշփոթ և անապական՝ որպէս զառնելներակայսն։ Քանզի ի վերայ մարմնոյ՝ միաւորութիւն այլայլումն գործէ՝ որոց ընդ նմայն են աւմենայն իրօք, վասն զի յայլ մարմին փոխարկին, որպէս տարերքս ի խառնուածս և կերակուրք յարին, իսկ արին ի մարմին և յայլս մասունս մարմնոյն։ Իսկ ի վերայ իմացականացն՝ միաւորութիւն լինի, բայց այլայլումն ոչ հետեի։ ոչ բնաւորեցաւ իմացականն ըստ էութեանն՝ այլայլիլ, այլ կամ՝ յափշտութեան լինի և կամ յոչգոյ ապականի, բայց փոխադրութիւն ոչ ընդունի։ այլ և ոչ յոչգոյ ապականի, քանզի ոչ արդեօք էր անմահ։ Եւ անձն կենաց, եթէ ի խառնեւն փոխարկուր, քանզի եթէ այլայլէր արդեօք՝ և ոչ ևս լինէր կենանք⁵։ և զինչ նպաստ լինէր մարմնոյն՝ եթէ ոչ շնորհէր նմա զկեանքն ոչ ուրեմն այլայլի անձն ի միաւորելն։

1) Այսինքն, զի և չէ մարմն մութիւն ասել զիրաց ինչ առնելներ իրերաց կուտաւ կուտն, որպէս զփայտի առ երկաթ, և այլն։

2) Այս է, որպէս ուրեմն մարմն ինչ ասել զմի միայն կազմել կենդանի։

3) Յորեմիան Պղատոնի։ ուղղեցաւ ըստ յունին։

4) Իմա ըստ յունին՝ որպէս ի միասին զապականելիս։

5) Այսպէս խառնակ յամենայն օրինակս մեր։ Յոյն բնագիրն ունի Καί η ψυχῇ, էջող σὺσα, εἰ ἐν τῇ χόρσῃ μετεβάλλετο, ἢ ἀλλοιωθῇ αὐτὴ καὶ οὐκ ἔτι ἦν ἔջող այսինքն է։ Եւ անձն

Արդ, ցուցելոյ այսորիկ՝ եթէ իմացականքն անայլայելիք են ըստ էութեանն, հարկաւորապէս հետեւեացի և 'ի միաւորին' ոչ ընդ նմին ապականել ընդ որոց միաւորին: Եւ միաւորի այժմ, և անշփոթութեամբ միաւորի ընդ մարմնի անձն: Եւ արդ, զի միաւորի՝ ախտակցութիւնն ցուցանէ. քանզի ախտակից է բոլորն կենդանի ինքեան, որպէս մի գոլ: Իսկ զի անշփոթ մնայ, յայտ է՝ յորմէ անձինն յեղանակաւ իւրիք զատուցելոյ 'ի մարմնոյն'՝ 'ի ննջելն, որպէս մեռեալ, թաղեալ, բայց միայն 'ի տուր և առ շնչոյն կենդանեացն, զի մի իսպառ կորիցէ: Ինքն ըստ ինքեան 'ի յանուրջն ներգործէ, նկատելով զապառնիսն և յիմացականն հպելով: Նոյն պատահի և յորժամ ըստ ինքեան հայեացի ինչ յէիցս, քանզի և յայնժամ՝ իրաւի կարողութիւնն է՝ զատի 'ի մարմնոյն և յինքեան լինի, զի այսպէս մխիցէ զինքն յէսս, քանզի անմարմին գոլով՝ բոլորովին տարեալ եղև որպէս զապականակիցս, մնալով անապական և անշփոթ, և զըստ ինքեանն ամբողջ պահեալ, և յորս լինին՝ դարձուցեալ զնոսա յիւր կեանս, և ոչ փոխեալ 'ի նոցայն' 3, քանզի որպէս արեգակն մերձաւորութեամբ զօդս 'ի լոյս փոխարկէ՝ առնելով զսա լուսատեսակ, և միաւորէ ընդ օդոյս զլոյսն՝ անշփոթաբար համանդամայն ընդ սմա հեղեալ, ըստ նորին յեղանակի և անձն միաւորեալ ընդ մարմնոյ՝ մնայ ամենայն իրօքան շփոթ, ըստ այսր միայն փոխեալ, զի արեգակն մարմին գոլով և ընդ տեղեան պարագրեալ, ոչ է ամենայն ուրեք՝ օւրանայն և լոյսն նորս, որպէս և ոչ հօր, քանզի մնայ և 'ի փայտ կամ 'ի հրապի՝ կապեալ որպէս 'ի տեղուջ: Իսկ անձն՝ անմարմին գոլով և ոչ պարագրեալ ընդ տեղեալ, յամենայն տարեալ լինի, և 'ի լոյս և 'ի մարմինն. և ոչ է մասն լուսաւորեալ 'ի նմանէ, յորում՝ ոչ բոլորն մերձ է, քանզի ոչ լինի կապեալ 'ի մարմնոյ, այլ ինքն ունի զմարմինս. և ոչ 'ի մարմնի՝ է որպէս յամանի ինչ և կամ 'ի սկի, այլ յաւետ մարմինն 'ի նմա: Քանզի ոչ արգելեալք 'ի մարմնոց իմոցականքն՝ ընդ ամենայն մարմինն տարեալք, ոչ է կար նոցա 'ի մարմնականէ ըմբռնիլ իմացականք գոլով յիմացական տեղիս են. զի կամ յինքեանս կամ 'ի գերակայսն՝ իմացականք գոլով՝ յիմացականս 4. որպէս անձն երբեմն լինքեան է՝ յորժամ խորհի, և երբեմն 'ի միտն՝ յորժամ իմանայ: Արդ՝ յորժամ 'ի մարմնի ասի գոլ, ոչ որպէս 'ի տեղուջ՝ 'ի մարմնին ասի

կեանք գոլով, եթէ 'ի խառնրման անդ փոխարկէր, այլայլէր և ոչ ևս կեանք լինէր:

1) Այս է, յայտ յայնմանէ է՝ զի անձն եզանակաւ իւրք զատանի 'ի մարմնոյն 'ի ննջելն, և այլն:

2) Մի՞թիւն են բանիք, որովք կամի ստել զի անձին կամ հօգուոյ անմարմին գոլով՝ Թափ ընդ ամենայն ուրեք անցանէ, ըստ օրինակի իրաց՝ որք 'ի միասն ապականացուք են, այլ ինքն անապական մնայ և անշփոթ, և յոր ինչ և Թափ անցանիցէ՝ պահէ զինքեան թիւնն իւր, ոչ ինքն 'ի կեանս նոցին շրջի, այլ զնոսա յիւր կեանս դարձուցանէ:

3) Ἡ γὰρ ἐν δαυτοῖς ἡ ἐν τοῖς ὑπεροκειμένοις νοητοῖς.

գոլ, այլ որպէս կալմամբ և աւրնթեր գոլ, որպէս ասի և Աստուած 'ի մեզ: Քսանգի կալմամբ և առ 'ի չնդելով և տրամադրութեամբ կապիլ ա. սեմք 'ի մարմնոյ զանձն, որպէս և տափեցելումն կապիլ ասեմք զուսու. զըն, ոչ մարմնապէս և ոչ տեղաբար, այլ ըստ կալման. քանզի առանց մեծութեան գոլով և առանց թանձրութեան և անմասնութեան. քան. զի ըստ մասին և զտեղական պարագրութիւն¹ վեհագոյն է, քանզի որ ոչն ունի մասն ընդ որով տեղեալ կարէ պարագրիլ. զի ընդ թանձրութեան տեղի ենթակայի², քանզի տեղի է բովանդակութիւն պարագրողին, ըստ որում պարագրէ զպարագրեալն, իսկ թէ ոք ասիցէ՝ ապա ուրեմն և յԱղեքսանդրիա և 'ի Հռովմ' է, և ամենայն ուրեք է իմն անձն, զսինխլանայ յինքեան՝ զարձեալ տեղի տաելով, քանզի և յԱղեքսանդրիայն և բնաւին այս ինչ ուրեքն՝ տեղի է. 'ի տեղւոյ ա. մեննին ոչ է, այլ կալմամբ, քանզի ցուցաւ ոչ կար գոլ ըմբռնիլ ընդ տեղեալ: Արդ, յորժամ ընդ կալմամբ լինիցի իմացականն՝ տեղւոյ ուրեք կամ իրի, 'ի տեղւոյ գոլով պիտակապէս, անդ ասեմք գոլ նմա՝ վասն ներգործութեան նորա անդ, զտեղին փոխանակ կալման և ներգործութեան աւնըլով, քանզի պարտ է ասել՝ անդր ներգործ է, ասեմք՝ թէ անդ է:

Քանզի պատշաճիւր արդեւք այսպէս մաքուր բանս մանաւանդ առ մարդկութիւնս միաւորութեան Աստուածն Բանին. ըստ որում միաւորեալ մնաց անչփոթ և անպարագրելի. ոչ ըստ անձին յեղանակի, քանզինա՝ ի բազմացելոցն գոլով՝ թուի և ախտակից լինել վասն իւրութեանն՝ մարմնայն. է երբեք զի և ըմբռնել և ըմբռնիլ³. իսկ Աստուածն Բան՝ ոչինչ ինքն 'ի կցորդութենէն՝ որ առ մարմին և անձն՝ այլայլեալ, և ոչ ընդունակ եղեալ նոցա տկարութեան, այլ հաղորդեցուցեալ զնոսա իւրոյն աստուածութեան՝ լինի նոքզ մի, մնացեալ մի՝ որ ինչ էր և նախքան զմիաւորին: Նորիմն է յեղանակս այս խառնման և միաւորութեան. և խառնի և մնայ, յամենայնի ամենայնի ախտաւն և անչփոթ, և անապական և անփոխադրելի. ոչ ախտակից եղեալ, այլ գործակից միայն. ոչ ապականակից և այլայլակից, այլ 'ի միասին աճեցեալ նոցա, նա ոչ նուազեալ 'ի նոցանէ, առ 'ի մնալոյ անփոփոխելի և անչփոթելի. վասն զի և մաքրապէս ամենայն այլայլութեան անընդունակ է:

Վկայ այսոցիկ և Պորփիրուիոս, հակառակ Քրիստոսի շարժեալ զիւրն լեզու. զի հզոր են թշնամեացն վասն մեր վկայութիւնք, և ոչ

1) 'Αμέγεδες γὰρ ὄν καὶ ἀογκον καὶ ἀμέρες τῆς κατὰ μέρος τοιαύτης περιγραφῆς κρείττονός ἐστι, ὡς է. Քանզի առանց մեծութեան գոլով և թանձրութեան և անմասնութեան, և ոչ 'ի տեղւոյէ իմքէ սահմանիլ կամ պարագրիլ կարէ:

2) 'Ὅγκω γὰρ τόπος συνφύεται, (Քանզի ընդ թանձրութեան գոյակից է տեղի):

3) 'Ἐκείνη μὲν γὰρ, τὴν πεπλησυσμένην εὐσά, δοκαὶ καὶ συμπάσχειν πὺς δι' οὐκείοτητα τῷ σώματι, καὶ κρατεῖν εὐδ' ὅτε, καὶ κρατεῖσθαι.

մի ընդդիմաբանութիւն ընդունելով: Այս Պորփուրոս՝ յերկրորդ բանից շարախառնիցն խնդրելիացն՝¹ գրէ այսպէս. Ոչ է ասել եթէ անհնարին է՝ էութեան իրիք առեալ լինել 'ի լուսնն այլ էութեան, և լինել մասն էութեան, մնալով ըստ իւրոյն բնութեան մի, յետ ընչին զմիւսն էութիւն. ընդ այլում լինելով, և զիւրն ամբողջ պահելով. և որ մեծագոյնն է՝ իւր ոչ փոփոխեալ², այլ փոփոխեալ զնոսա՝ յարս լինիցին՝ յիւր ներգործութիւնն մերձաւորութեամբն: Եւ ասէ զայս յաղաքս միաւորութեան անձին և մարմնոյ: Իսկ եթէ 'ի վերայ անձին ճշմարիտ է բանս վասն անմարմնութեանն՝ որչափ ևս առաւել 'ի վերայ Բանին Աստուծոյ, յաւէտ անբաղդատաբար և ըստ ճշմարտութեան անմարմնոյն. որ հակառակ խնու զբերանս ձեռնարկողացն՝ բամբասել զԱստուծոյ Բանին միաւորութիւնն առ մարդկութիւնն. քանզի այս հեթանոսացն է, որք բազմածիծարղելիս առնեն, ասելով թէ՛ անկար է և անվայելուչ և անհաւանելի և անիմաստ՝ լինել ընդ մահկանացուի բնութեան աստուածայնոյն ընդխառնման և միաւորութեան: Այլ մեք բարեփորձ վկայութն նոցա վարեալք, 'ի բաց մերկանամք զպատճառն:

Զի ասի առ 'ի յոմանց, և մանաւանդ յեւնոմոիոսացն, միաւորեալ Բանին Աստուծոյ ընդ մարմնոյն՝ ոչ ըստ էութեան, այլ ըստ իւրաքանչիւր զօրութեանն. քանզի ոչ զէութիւնս խառնեալս կամ միաւորեալս (ասեն), այլ զզօրութիւնսն մարմնոյն ընդ զօրութիւնս աստուածայնոյն խառնեալ: Եւ զօրութիւնս մարմնոյ՝ ամենայն իրօք ուրեք զգործարանական գոլ ասեն՝ ըստ Արիստոտելի՝ զգայութիւնսն. արդ՝ ընդ այսոսիկ աստուածային զօրութիւնքն խառնեալք զմիաւորութիւն գործեցին՝ ըստ նոցա: Ոչ սք արգելք տացէ նոցա թոյլ, որ պէս վարկանիմ, զգգայարանսն մարմնական զօրութիւնս ասելոյ. քանզի որոշի, յառաջ կոյս հաւաստեալ³ թէ զինչ են իրք մարմնոյն, զինչ անձինն, զինչ հանգերձ երկաքանչիւրիւքն. և յիւրսն հանգերձ երկաքանչիւրիւքն⁴ զորս 'ի ձեռն գործարանացն՝ զգայութիւնս եղաք. զնոյնս գործարանս՝ մարմնոյն ասեմք գոլ. Արդ լաւագոյն է, որպէս և յառաջագոյն ասացաւ, ըստ ընդանի բնութեանն անմարմնոյն՝ անշփոթաբար լինել միաւորութեանն. էութեանցն ոչ ինչ վնասեցելոյ աստուածայնոյն՝ 'ի նուաստագունէն, այլ սորա միոյն օգտեցելոյ յաստուածայնոյն: Վասն զի մաքուր և անմարմին բնութիւնն տարեալ լինի անարգելաբար ընդ ամենայն. իսկ ընդ նա՝ և ոչ ինչ. որպէս

1) 'Εν τῷ δευτέρῳ λόγῳ (τῷ περὶ) τῶν συμμίχτων ζήτημάτων γράφει κατὰ λέξιν οὕτως.

2) Յօրինակս մեր. Եւ զմեծագունութիւնն իւր ոչ փոփոխեալ. ուղղեցաւ ըստ յունիւն:

3) Այս է, յառաջագոյն 'ի վերոյ ցուցաք հաւաստեալ:

4) Այսպէս մօթի յօրինակս մեր. Յոյնն ունի. Καὶ ἐν τοῖς ἰδίῳις τοῦ συναμφοτέρου τὰς δι' ὀργάνων αἰσθησῆαι ἐτίδεσθαι՝ այսինքն. Եւ 'ի կարգի պատշաճեցելոյն աս. Երկաքանչիւքն ևս՝ եղաք զգգայարանս, որք գործարանօքն վարին:

տարեան լինել նորա ընդ ամենայն՝ է միաւորիլ, իսկ ոչ ինչ ընդ նայն՝ 1 և մնալ անխառն և անշփոթ :

Արդ, ոչ հաճութեան է յեղանակ միաւորութեանս, որպէս թուեցաւ արանց փառաւորաց, այլ բնութիւնն է պատճառ. քանզի առնուլ մարմին իրաւամբք որ ասիցէ ըստ հաճութեան լինել, բայց 'ի միաւորելն ոչ չփոթիլ՝ ըստ ընտանի բնութեան Աստուծոյ, և ոչ ըստ հաճութեան լինել. քանզի զաստիճանս անձանց, և զել և զէջն, որպէս իւրիւգինէսն մուծանէ, ոչ հեռեւեալ աստուածայնոց գրոց և ոչ համաձայնեալ քրիստոնէից օրինադրութեանց, 'ի բաց թողի է :

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

Յաղագս մարմնոյ

Ամենայն մարմին չորից տարերցս է իւռնուած, և 'ի սոցանէ եղև իսկ մերձաւորապէս արիւնաւորացն կենդանեացն՝ 'ի չորիցն հիւթոց, յարենէ, 'ի մաղասոյ, 'ի խարտեալ մաղձոյ և 'ի սեւոյ 2. իսկ անարեանցն՝ յայլոցն հիւթոց և համեմատեցելոցն 'ի նոսա՝ փոխանակ արեանն : Եւ մերձաւորապէս ասի՝ յորժամ անընդմիջաբար՝ 'ի նոյնն 'ի նոցանէ ինչ լինի. որպէս զի գոլ չորիցն տարիւրց խառնուած՝ ըզչորսն հիւթս, իսկ չորիցն հիւթոցն՝ նմանամասուը, որք են մասնը կունք մարմնոյն : Նմանեցուցանեն երկրի զսեւա մաղձ, և լրոյ՝ զմաղաս, օգոյ՝ զարիւնն, և հրոյ՝ զխարտեալն մաղձ. և է որպէս խառնուած տարերցս՝ կամ կարծր կամ խոնաւուտ կամ օդ :

Բայց Արիստոտելէս մերձաւորապէս 'ի միայնոյ յարենէ ախորժէ լինել զմարմինս կենդանեացն, քանզի 'ի սմանէ և սնանիլ մերձաւորապէս և աճել ամենայն մասնկանց կենդանւոյն. և սերմանն ըզժնունդն յարենէ ունել : Այլ վասն զի 'ի միոջէ և 'ի նոյնոյ ոչ թուէր բարւոք ունել զխստագոյնսն ոսկերս և զկակուղն մարմին և զճարպըն լինել, հաճոյ թուեցաւ նախ Հիւպպոկրատեսայ զմարմինս կենդանեացն 'ի չորից հիւթոց մածանիլ մերձաւորապէս, զի 'ի թանձրագունիցն՝ պնդագոյնքն եղիցին, և 'ի փափկագունիցն՝ փափուկքն : Եւ գտանին յորովակի չորեքին՝ յարիւն, որպէս է տեսանել 'ի կտրել երակաց, երբեմն 'ի հոսմանն՝ մաղասոյ առաւելութիւն, երբեմն սեւա մաղձոյ և կամ խարտեալի. ուստի և թուեցաւ արանցն միմեանց համաձայնիլ :

Եւ 'ի մասունսն յորս 'ի կենդանիսն է ինչ՝ որ նմանամասն է, և է ինչ որ աննմանամասն : Եւ նմանամասն՝ որպէս ուղիղ զլիւսոյ, քունք, ջիւք, ուղիղ, ոսկր, ատամն, օճառք, գեղձք, շաղկապք, պարուտակք, նեարդք, մազ, եղընգունք, մարմինք, երակք, շնչերակք, վտառք,

1) Երկնական երկուս. իսկ ոչ ինչ ընդունայն է :

2) Նշելու յետիւնք ըստ արգեայց կոլին մաղձ լեբգային և մաղձ փամփշտային :

ճարպ, մորթ, և որ ինչ տարբերք են՝ հուպք 'ի նոսա, արիւն մաքուր՝ ըստ որում արիւն է, մալաւ, մաղձ սեւաւ և խարտեալ, քանզի կարծք շարադրութեամբ են՝ 'ի շաղկապոյ և 'ի ջլուտ նեարդաց: Իսկ տն նմանամասունք են՝ գլուխ, կուրծք, ոտք, ձեռք, և այլ անդամք մարդոյ: Քանզի ոչ 'ի գլուխ բաժանի գլուխ, որպէս ջիլ 'ի ջիլ կամ երակ յերակ կամ մարմին 'ի մարմին, այլ ամենայն անմասնամասն 'ի նմանամասանցն է հաստատեալ. որպէս գլուխ 'ի ջլաց և 'ի մարմնոց և յոտկերոց և յոյսպիսեացս: Իսկ կոչեն զայս և գործարանականս:

Եւ է առ 'ի նմանամասանցն այս ¹. Որոց մասնկուլքն՝ բոլորին և միմեանց են նման. իսկ զնմանն փոխանակ նոյնոյ պարտ է առնուլ: Բայց ոչ ամենայն կենդանիք զամենայն մասնկուլս մարմնոյ ունին. այլ է ինչ՝ զոր ոչն ունին. քանզի ոմանք 'ի նոյանն առանց ոտից են, որպէս ձկուկ և օձք. և ոմանք անգլուխք, որպէս կարկինուքն և կառաթոյսքն և այլք 'ի լուղակացն. քանզի 'ի լանջան ունին զգայարանս, և փսն ոչ ունենլոյ նոցա գլուխս: Եւ են ինչ՝ որք 'ի թղթոց են զըրկեալք, որ ոչ տան և առնուն զօդս ², և են ինչ՝ որոց առաւուշտ ոչ է՝ որպէս հաւուց և ամենայն ինչ որ ոչ միջիցէ: Իսկ 'ի խեցեմորթիցն բաղումք են՝ որ անմասն են, յանդամոց. քանզի սակաւուք է նոցա գոլն՝ կենդանիս ³. Եւ թուի ոմանց ունել ինչ՝ իբրեւ ոչ ունել. որպէս և եղջերուք թուին ոչ ունել զխարտեալն մաղձ, փսն զի անբրեղթն ունին ցրուեալ զնա ընդ ընդերսն: Բայց մարդ և զամենայն և կատարուն, և որպէս ոչ է հնար այլազգ ունել՝ բարեռք ունի զամենայն: Այսպէս և ըստ դրութեան մասնկանցն՝ բազում տարբերութիւն է կենդանեացն. քանզի են ինչ՝ որ ունին զստինսն 'ի կուրծսն և որ 'ի փորն, և են ինչ՝ որ ընդ ընդերքն. և ոմանք երկուս և այլք չորս և այլք բազումս. քանզի գրեթէ չափաւորեաց բնութիւնն ծնեցելոցն թուով՝ զբազմութիւն ստեանցն:

Իսկ եթէ դք ստուգիւ կամիցի ասել ⁴ մի ըստ միոյ՝ յաղապս կենդանեացն՝ զպատմութիւնն Արիստոտելի ընթերցցի: Քանզի գրոցն առաջի կաւով՝ ոչ է մեղ ստուգել զայս, այլ իբրև մակագրութիւնս ինչ և տիպս արտագրել: Բայց այժմ՝ փոխեցուք 'ի տարերցս բան ըստ հետեւման խնդրելով:

1) Յօրինակս երկուս սա: Յոյնն դնէ "Ὅρος δὲ ὁμοιομερῶν οὗτος, այսինքն. Եւ է սահման նմանամասանցն այս ինչ:

2) Թէպէտ և իցեն տեսակք ինչ կենդանեաց, յորս պակասեն թոքք, ոչն ոչ եթէ այնու վերջացեալք գտանին 'ի տուրուաւէ շնչոյ, որ կատարի 'ի նոսա 'ի ձեռն խոզոյ, քակաց ինչ շնչափող կոչեցելոց. զոր և 'ի բուսականս իսկ է տեսանել:

3) 'Ἐν ολίγοις γὰρ αὐτοῖς τὸ εἶναι ζωῆς ὑπάρχει.

4) 'Ἐκλέγεω, իմա քաղիլ, 'ի միտ առնել: